

ԵՐԵՎԱՆԻ ՏԱԼԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ

Օտար քաղաքացիք գիտում են ուղղակի

Тифлис. Редакция „Мелк“

„ՄԵԼԿ“

ԻՐԱԿԱՆԵՐԸ ԵՒ ԲԱՆԴԱՐԱՆԵՐԸ ԼՐԱԴԻՐ

1878

Թիֆլիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՍՆՆ ՕՐ, բացի տոն և տոներին հետեւեալ օրերին:

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵԿԵՆ ՀԵՌԵՐԻՆԵՐ: ՓՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի: Գրել կարելի է ԻՄԲԱԳՐԱՏԱՆԻ մէջ:

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՐԵՐԻՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատր: Օտար քաղաքացիք պէտք է գիտնեն հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИС Редакция „Мелк“:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻՊՈԹԻՒՆ

Անգլիայի օգուտները: Ներքին տեսու-թիւն: Նամակ Բագրուից: Նամակ Մաշտոցայից: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսու-թիւն: Հնար-տութիւն և արդեստ: Նամակ Թիֆլիսից: Ար-տաքին լուրեր: Յայտարարութիւններ: Տեղե-կացոյց:

ԱՆԳԼԻԱՅԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Ռուսաստանը գէնը բարձրաց-րեց: Թիֆլիսից քրիստոնեա-ներին ազատելու համար, նա ա-րին թափեց և յողթեց թիւր-քիային: Բայց արեւելեան ինգիրը դեռ է կարելի տեսնել թէ կատա-րելապէս վճռված է: Ինչ քրիս-տոնեայ երկիրներից շատերը մնո-ցին թիւրքիայի լուծի տակ:

Ընդհան այդ գիտէ, նա հաս-կանում է որ վաղ թէ ուշ կո-րով է ինգիր ծագել և այդ միացած երկիրներն էլ թիւրքիայից ազա-տելու: Այդ պատճառով մտա-ծում են, պէտք է այնպէս անել, որ այդ երկիրներում քրիստոնեաներ չը մնան, կամ գոնէ նրանք ճշմարիտ լինեն մաճմետական տարրից: Եւ, ահա, Ընդհան արշտտում է ոյժ տալ մաճմետական տարրին Մարոս կղզու վրա, որպէս զի յոյն տարրը ճշմարիտ լինի, զինաւորում է քուր-դերին Հայաստանում, որպէս զի հայերը չը կարողանան ձայն հա-նել:

Հատ մարդասեր քաղաքակա-նութիւն է...

Ի հարկէ Ընդհան այդ անում

է որ միւս անգամ այդ երկիրների վերաբերութեամբ չը ծագի քրիս-տոնեաներին թիւրքաց լուծից ա-զատելու ինգիրը, որովհետեւ այդ պիտով կարող է պատահել որ այդ երկիրներում ոչ մի քրիստոնեայ չի մնայ:

Այո՛, կարող է պատահել, մա-նաւոր Հայաստանի մէջ, եթէ հայերը յուսահատվեն, վախենան, փախչեն, փոխանակ ընդդիմադրե-լու: Այն ժամանակ, այո՛, հա-յերը կարգարացնեն Բիկոնաֆիլդի նրանց, վրա ասած խօսքը թէ վախկոտ և թուլասիրտ ազգ են:

Տեսնելով այդ տեսակ քաղա-քականութիւն Ընդհանի կողմից, հայերը ընդհակառակն պէտք է ամեն միջոցներ գործ դնեն, որ մնալով իրանց հայրենիքում, աշ-խատեն զինաւորվել:

Մի մեծ հերոսութիւն է, տեսնելով հայրենիքը վտանգի մէջ, իսկոյն փախչել, գաղթել հայրե-նիքից, բայց ամեն ազգի պարտա-ւորութիւն է այդ տեսակ զէպ-քերում հաստատ մնալ իր տեղի վրա և մինչև անգամ կեանքի զը-նով ընդդիմանալ ամեն տեսակ արգելքներին:

Եւ այն ժամանակ, մենք հա-ւատացած ենք, որ իրանք ան-գիւցանիքները ստիպված կը լինեն պառուել յարգել հայերին և ոչ մի հրէայ Բիկոնաֆիլդ չի համար-ձակվի ցեղի գեղե միամբողջ ազգի երեսին:

Բայց թող չը մոռանան հայե-

րը որ Ռուսաստանը Սան-Ստե-ֆանսի դաշնագրի 16-որդ յո-դուածով, որ և մտնէ Բերլինի դաշնագրի մէջ, հայերի պաշտպան է հանդիսացել, պաշանելով որ հայերին տրվել քուրդերի և չեք-կեզների դէմ ապահովութիւն: Այդ յօդուածի գլխաւոր մտքը ուրիշ կերպ չէ կարելի հասկանալ եթէ ոչ որ հայերը պէտք է իրա-ւունք ունենան զինաւորվել, իրանց սեփական միջոցաւ ունենալ:

Բայց թիւրքիան կատարում է արգելք այդ խոստմունքը: Ընդ-լիայի օգնութեամբ զինաւորել քուրդերին աւել տաստիկ կեր-պով քան թէ առաջ, — Է նշա-նակում ապահովութիւն ապա հա-յերին քուրդերի հարստահարու-թիւնների դէմ:

Բերլինի դաշնագրի հիման վրա հայերը կատարեալ իրաւունք ու-նեն այժմ բարձրագոյն բողոքել թէ Ռուսաստանին և թէ ամբողջ Եւրոպային մի կողմից թիւր-քիայի դէմ, որ իր խոստմունքը չէ կատարում, իսկ միւս կողմից Ընդլիայի դէմ, որ յանձն է առել թիւրքիայի վրա հովա-նաւորութիւնը և պաշանել որ եւրոպական տէրութիւնների ընդ-հանուր հսկողութեամբ ամբողջ թիւրքաց Հայաստանում անյա-պաղ կազմվի հայերից լաւ զինա-ւորված միջոցաւ:

Ինչ է անում Վ. Պօլսի հայոց ազգային ժողովը: Այս քննած է: Այդ բողոքի յուզելը նրա գործն է:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅՑ

2 ծրագրով

Դուք պահանջում էք յայտնել, թէ ուսումն. հոգաբարձուի օգնական պ. Մոզզալիս-կին ինչ գրութեան մէջ է գտել այստեղի հայոց դպրոցները և ինչ է ասել նրանց վերա-բերութեամբ: Այդ հանգամանքը մի թանձր քո-ղով ծածկված է և այդ մասին մեր ունեցած տե-ղեկութիւնները շատ կցկուտ են, որովհետեւ պա-րենի այցելութեան ժամանակ դպրոցներում միայն հայր Ստեփանէն է եղել, բոլոր անցքը միայն նրան յայտնի է, նրանից են տարածվել մի քանի լուրեր: Պ. Մոզզալիսկին Բագու գալով իր մօտ կանչեց մի քանի անձինք և հարց-րեց, թէ ինչ պատճառով ժողովրդի մէջ դժգո-հութիւն կայ հայ Ստեփանէի դէմ. նա ասաց, որ տարածանութիւնները յայտնի են բարձր իշխանութեանը և վեհ. կաթողիկոսին, և ինքը

խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից): Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

պէտք է քննէ և տեղեկանայ նրանց պատ-ճառները, կանխաձեռնել իրանց բացատրու-թիւն չէն տուել, այլ մատնացրց են արել Մարդ. Ընդ. խորհուրդին, որ նրան զինէ և դրաւոր կերպով տեղեկանայ: Թէ և ճիշդ չը դի-տենք, սակայն երևում է, որ խորհուրդը զանա-զան պատճառներից ստիպված չէ կամեցել հա-ւասարակշռութիւնը կորցնել և չէզոք ու անորոշ պատասխան է տուել: Յուլիսի 2-ին պարզաւա-բայութեան հանդէսում հայր Ստեփանէն ինքն առնախօսելին յայտնեց, որ պ. Մոզզալիսկի-ն դպրոցները շատ առաջադէմ և բարեկարգ վիճակի մէջ է գտել, մեծ շնորհակալութիւն է արել իրան և խոստացել է պ. հասանազատի մօտ բարեթոյսել — պետական որ և լցէ մի շքա-նշանով իրան վարձատրելու համար, և իբր թէ պ. հասանազատը են յիշել է իրան այն միջոցով թեան մասին իսկ այլ աղբիւրներից լսեցինք, որ պ. Մոզզալիսկին հայր Ստեփա-նէին ասել է, թէ հոգեւորական անձինք վայելչ չէ հոգեւոր դպրոցում թատրոնական ներկայացում ներով, ճաշկերթներով և հանդէսներով զբաղ-վել: Նա, ասում են, զաւաթ ա վար ն պա-տակով միայն իրան գոհ է ցոյց տուել: Օրորո-ղաց դպրոցի փակելու մասին թէ ինչ է խօսել, յայտնի չէ: Այս բոլորը, ինչ որ դիտենք պ. Մոզ-զալիսկիին այցելութեան վերաբերութեամբ:

Սակայն, պ. Խմբագիր, միթէ զեռն որդ զաղափար չունէ մեր դպրոցների մասին, ինքնիք դատեցէք. Բնապէս կարող է բարեկար-գութիւն և առաջադիմութիւն լինել այն դպրոց-ներում, ուր ամբողջ տարին տանաւոր ուսու-ցիչներ են փոխվել, ուր մանկավարժական խոր-հուրդներ չեն եղել և դասացուցակներ յաճա-խակի փոխվել են, ուր թագաւորած են եղել կռիւ, ծեծ, հայրայնաբէ սրտամոլ քարոզու-թիւններ: Ոչ, անհոգ եղէք այդ մասին, մեր դըպ-րոցները ընթացքը բողոքովին հակառակ է արդի մանկավարժութեան վառնալիքներին, թող ով որ-քան կամենայ գովեստներ չապյէ և միամիտ ներին հաւատացնէ:

Յուլիսի վերջին կէսը այստեղ եղանակը շատ հով անցաւ, որովհետեւ 10—15 օր չարունակ հիւ-սիսային կողմից սաստիկ փչում էր, որից յետոյ անձրև եկաւ, այնպէս որ ցուրտը զգալի էր և շատերը տաք հագուստ հագան: Այժմ ես նոյն քամին փչում է անդադար և ճիշտապէս հոգում է քաղաքացիների առողջութեան համար, քաղ-վասարաների զարհաճութիւնը մարդկով և օդը զովացնելով, շատ գոհ ենք այս բարեբար քամուց, որ մեզ պոլիցիայի կամ քաղաքային ինքնավարութեան յոյնով չէ թողում, եթէ ոչ բաներս վատ կը լինէր:

Լուրով է, որ Գ. Ստեփանէն բողոքովին չէ բա-ժանվել Բագուից. նա մտադիր է էջմիաշինք քնն-նիչներ բերել տալ, մի քանի մարդկանց իբր թէ զեղծութիւնները հրապարակ հանել, քաղաքային անցնելով արդարանալ և պիտի նստել այստեղ, Մի և նոյն ժամանակ լուր է տարածված, որ պատրաստվում է Էվարդպետ Ստեփանէի հրաշալիքով վերնագրով մի գրքով, որի մէջ ոչ միայն նրա դպրոցաբարձական, խմբագրական և վարդապետական ամբողջ գործունէութիւնն է մանրամասն ըննադատութեան ենթարկված, այլ և հանդէս են հանված նրա վերաբերու-թեամբ ունեց բռնած կողմնապահ և վնասակար ընկալքը հաստատուն ապացոյցներով: Շատ ցանկալի էր, որ Գ. Ստեփանէն փոքր ինչ ԼԵՐ-շութեամբ կուէր հանգամանքներ, հանգիստ կանար իր համար և ճիշտապէս բանի չը ձեռ-նարկէր, որովհետեւ եթէ իսկապէս ընտելութեան բացվի հազիւ թէ ինքն կարողանայ արդարա-նալ:

Վարձապետներ պատրաստելու հարցը մեր Ս դպրոցների համար կեանքի և մասն հարց է, և բագուցից այս կարիքը լաւ հասկացած վնասա-լով արդէն սկսել են երիտասարդներ ուղարկել Մոսկվայի վարձապետանոցը: Բայց լաւ կը վի-նէր, որ մերքեզ ոչ միայն ուղարկէին և դրանով իրանց պարտքը կատարած համարէին, այլ և խիստ ընտրութեամբ ընտրէին վարձապետա-

8	Քի նիւանդութիւններ.
5	70
2	27